

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Պատնեշների կիրառումը՝ որպես սոցիալական/ֆիզիկական հեռավորության պահպանման վերահսկման
ինժեներական լուծում

Վերջին Թարմացումներ.

10/19/20. Պատնեշների բարձրության և լայնության վերաբերյալ տրամադրվող մանրամասներ:

Այս ուղեցույցի նպատակն է նկատառումներ տրամադրել ֆիզիկական պատնեշների գործածման վերաբերյալ, որոնք COVID-19-ի վերականգնման փուլերի ընթացքում կծառայեն որպես ֆիզիկական տարածական հեռավորությունը լրացնող ինժեներական վերահսկման մեթոդ:

- 1. Պատնեշների նպատակը՝ որպես վերահսկողության միջոց:** Ֆիզիկական տարածական հեռավորության պահպանման նպատակը հիվանդության փոխանցումը կանխելն է: Անթափանց պատնեշների կիրառումը կարող է հանդիսանալ վերահսկման ինժեներական լուծում, որը կիրառելու դեպքում լրացուցիչ պաշտպանություն էք տրամադրում և՛ հաճախորդներին, և՛ աշխատակիցներին: Այս բաժանարարների նպատակն է ապահովել, որ մի օգտատիրոջ շնչառական գոտին չաղտոտվի մյուսի արտաշնչումներից:
- 2. Պատնեշների ֆիզիկական հատկությունները:** Պատնեշները պետք է պատրաստված լինեն անջրաթափանց, մաքրվող և ամուր կյուլթերից, որոնք կարելի է հաճախակի մաքրել, և ունենան համապատասխան բարձրություն և լայնություն՝ կաթիլները պահելու համար (օրինակ՝ օրգանական ապակուց): Պատնեշները պետք է տեղադրվեն **Յրդեհային և Շիևարաթական** օրենքների պահանջներին համապատասխան, որպեսզի չխանգարեն օդափոխության կամ հրդեհային պաշտպանության համակարգերին:
- 3. Պատնեշի բարձրությունը և լայնությունը:** Պատնեշի բարձրությունը պետք է հաշվի առնի ամենաբարձրահասակ օգտատիրոջը, իսկ լայնությունը պետք է լինի այնքան, որքան թույլ է տալիս մակերեսը: Ընդհանրապես, պատնեշի բարձրությունը պետք է տրամադրի 6 ոտնաչափ պաշտպանություն՝ սկսած հատակից: Եթե սահմանափակ փոխազդեցությունների համար բացեր են անհրաժեշտ (օր. փաստաթղթի բնիկ, կամ տարածք վաճառքի կետի տերմինալի համար), բնիկները պետք է հնարավորինս փոքր լինեն և պետք է տեղադրված լինեն կենտրոնից դուրս, այլ ոչ թե մարդկանց դեմքի դիմաց:
- 4. Մաքրում և ախտահանում:** Օրվա ընթացքում հաճախակի և ըստ անհրաժեշտության մաքրեք և ախտահանեք պատնեշները՝ օգտագործելով Շրջակա Միջավայրի Պահպանության Գործակալության (EPA) ցանկում COVID-19-ի համար հաստատված կյուլթեր, և հետևեք տվյալ ապրանքի օգտագործման ցուցումներին. <https://www.epa.gov/pesticide-registration/listn-disinfectants-use-against-sars-cov-2>:
- 5. Բացօթյա ճաշկերույթ:** Եթե մայթի վրա է, պետք է տրամադրվի առնվազն 6 ոտնաչափ բարձրությամբ անթափանց և մաքրվող պատնեշ՝ ճաշողներին հետիոտներից պաշտպանելու համար, եթե 6 ոտնաչափ սոցիալական/ֆիզիկական հեռավորություն հնարավոր չէ պահպանել: Խորհրդակցեք տեղական գոտիավորման մասնագետների հետ, եթե սեղանները դրվելու են մայթերին կամ կայանատեղիների տարածքում: Բացօթյա սեղանների դեպքում

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն
Պատնեշների կիրառումը՝ որպես սոցիալական/ֆիզիկական հեռավորության պահպանման վերահսկման
ինժեներական լուծում

առնվազն 6 ոտնաչափ տարածական բաժանում պետք է լինի յուրաքանչյուր սեղանի միջև (6 ոտնաչափ հեռավորությունը պետք է չափել հաճախորդի դիրքից):

- 6. Տաղավարների բարձրությունն ավելացնող պատնեշներ:** Նահանգային ուղեցույցն ասում է. «Եթե սեղանները, աթոռները, տաղավարները և այլն հնարավոր չէ տեղաշարժել, օգտագործեք տեսողական ցուցումներ՝ ցույց տալու համար, որ դրանք չի կարելի օգտագործել, կամ տեղադրեք օրգանական ապակուց կամ այլ տեսակի անթափանց ֆիզիկական պատնեշներ՝ հաճախորդների միջև վարակը նվազագույնի հասցնելու համար»: Անթափանց պատնեշները, որոնք առնվազն 6 ոտնաչափ բարձրություն ունեն (կամ ավելի բարձ են, եթե բարձր աթոռներ են օգտագործվում) տաղավարի/սեղանի հատակից, կարող են կիրառվել, երբ վերջիններս անշարժ ամրացված են հատակին և չեն կարող տեղաշարժվել՝ հաճախորդների միջև վարակը նվազագույնի հասցնելու համար:
- 7. Աշխատողների աշխատակայանները բաժանող պատնեշներ:** Դրամարկդերի, հյուրընկալ-մենեջերի պատվանդանի կամ սևնդի և խմիչքների այլ սեղանների մոտ կարելի է ֆիզիկական պատնեշներ օգտագործել այն աշխատակիցների համար, ովքեր սովորաբար սերտ շփվում են հաճախորդների հետ:

Հավելյալ տեղեկությունների համար՝ խնդրում ենք զանգահարել Արդյունաբերական Ներգրավվածություն՝ (626) 430-5320 հեռախոսահամարով: COVID-19-ի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար այցելեք <http://publichealth.lacounty.gov> կամ զանգահարեք Լոս Անջելես Շրջանի տեղեկատվական գիծ՝ 2-1-1 համարով, որն աշխատում է օրը 24 ժամ: